

իրավունք ունի մերժել միջնորդ դատարանի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալը, եթե՝

1. վեճը ենթակա չէ միջնորդ դատարանի քննությանը,
2. միջնորդ դատարանի կազմավորման կարգը չի համապատասխանում կողմերի միջնորդ համաձայնությանը,
3. կողմը, ընդդեմ որի կայացվել է միջնորդ դատարանի վճիռը, պատշաճ ձևով չի տեղեկացվել գործի քննության ժամանակի և վայրի մասին,
4. միջնորդ դատարանի վճիռը չի համապատասխանում ՀՀ քաղաքացիական օրենսգրքին և քաղաքացիական իրավունքի նորմեր պարունակող այլ օրենքներին և իրավական ակտերին, եթե կողմերը ՀՀ քաղաքացիներ կամ իրավաբանական անձինք, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձինք են,
5. միջնորդ դատարանի վճիռը չի համապատասխանում կողմերի միջնորդ համաձայնությամբ կիրառման ենթակա այլ պետության քաղաքացիական իրավունքի նորմերին, եթե նրանց թեկուզ մեկն օտարերկրյա անձ է:

Մշտապես գործող միջնորդ դատարանում քննված գործը պահվում է այդ դատարանում:

Կոնկրետ վեճը լուծելու համար կողմերի ստեղծած միջնորդ դատարանում քննված գործն ի պահ է տրվում միջնորդ դատարանի գտնվելու վայրի առաջին ատյանի կամ տնտեսական դատարանին:

### ՄԻՋՆՈՐԳ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾԱԽՍԵՐԸ

Միջնորդ դատավարության ծախսերը կազմված են միջնորդ տուրքից կամ միջնորդ դատավորների հոնորարից և գործի քննության հետ կապված ծախսերից (օր.՝ վկաներին կանչելու, փորձաքննության հետ կապված ծախսեր և այլն):

Միջնորդ տուրքի չափերը որոշվում են մշտապես գործող միջնորդ դատարանների կանոնադրությամբ (կանոնակարգով):

Կոնկրետ վեճը լուծելու համար կողմերի ստեղծած միջնորդ դատարանի դատավորների հոնորարի չափերը որոշվում են կողմերի համաձայնությամբ:

Ծախսերի բաշխումը կողմերի միջև կատարվում է նրանց համաձայնությամբ: Նման համաձայնության բացակայության դեպքում ծախսերի բաշխումը կատարում է միջնորդ դատարանը՝ բավարարված պահանջների չափին համամասնորեն:

### Լրացուցիչ տեղեկություններ, ինչպես նաև ՀԵԻԱԻ և ՓՄԲՀ-ի կողմից հիմնադրված միջնորդ դատարան կարող եք դիմել հետևյալ հասցեներով՝

- ք. Երևան, Նալբանդյան 7, բն. 2, հեռախոս՝ (374 10) 540199, ֆաքս՝ (374 10) 580299, էլ. փոստ՝ ayla@ayla.am
  - ք. Գյումրի, Տիգրան Մեծի պողոտա 1, բն. 2, հեռախոս՝ (374 312) 23812, Ֆաքս՝ (374 312) 38236, էլ. փոստ՝ gyumri@ayla.am
  - ք. Իջևան, Մահմանադրության հրապարակ 1, Մարզպետարանի շենք, հեռախոս/ֆաքս (374 263) 32499, էլ. փոստ՝ ijevan@ayla.am
  - ք. Վանաձոր, Վարդանանց 82, բն. 1, հեռախոս/ֆաքս (374 322) 22317, էլ. փոստ՝ vanadzor@ayla.am
  - ք. Գավառ, Մարզպետարանի շենք, հեռախոս/ֆաքս (374 264) 25503, էլ. փոստ՝ gavar@ayla.am
  - ք. Գորիս, Մաշտոցի 3, հեռախոս/ֆաքս՝ (374 284) 25861, էլ. փոստ՝ goris@ayla.am
  - ք. Կապան, Ա. Մանուկյան 1, բն. 72 հեռախոս/ֆաքս՝ (374 285) 62511, էլ. փոստ՝ kapan@ayla.am:
- Նաև կարող եք այցելել ՀԵԻԱ վեբ կայք՝ [www.ayla.am](http://www.ayla.am):



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԳ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ

### ՄԻՋՆՈՐԳ ԴԱՏԱՐԱՆՆԵՐ ԵՎ ՄԻՋՆՈՐԳ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Սույն տեղեկատվական թերթիկում ներկայացվում է միջնորդ դատարանների հասկացությունը, դրանց իրավասությունը, միջնորդ դատարան դիմելու իրավունքի իրականացման կարգն ու պայմանները: Այստեղ ներառված են նաև տեղեկություններ միջնորդ դատարանների վճռի կատարման և գործերի պահման մասին:

Սույն իրատարակությունը ստեղծվել է ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության Եվրոպայի և Եվրասիայի բյուրոյի տնտեսական զարգացման գրասենյակի աջակցությամբ՝ EMT-G-00-02-00008-00 դրամաշնորհի պայմանների համաձայն: Ներկայացված կարծիքները պատկանում են Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիային (հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան 7, բն. 2, հեռ.՝ 540199, վեբ կայք՝ [www.ayla.am](http://www.ayla.am)) և պարտադիր չէ, որ համընկնեն ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության տեսակետներին: «Միջնորդ դատարանների և միջնորդ քննության ինստիտուտի զարգացումը Հայաստանում» ծրագիրը Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան իրականացնում է Փոքր և միջին բիզնեսի հիմնադրամի հետ համատեղ:



Նոյեմբեր, 2005

**ԻՐԱՉ Է ԻՐԵՆԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ՄԻՋՆՈՐԴ-  
ԴԱՏԱՐԱՆԸ ԵՎ ՄԻՋՆՈՐԴԱԿԱՆ  
ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ**

Միջնորդ դատավարությունը վեճերի լուծման արտադատարանական ամենատարածված միջոցներից մեկն է, որը նպատակն ունի կրճատել դատական գործերի քանակը և դատարանների ծանրաբեռնվածությունը, ապահովել իրավական բնույթի վեճերի արագ և արդյունավետ լուծումը, նվազեցնել տնտեսավարող սուբյեկտների՝ դատական մարմիններում վեճեր լուծելու հետ կապված ֆինանսական ծախսերը, հեշտացնել կապը արդարադատության հետ, ապահովել մարդու իրավունքների պաշտպանության արդյունավետությունը և այլն:

ՀՀ-ում կարող են ստեղծվել հետևյալ միջնորդ դատարանները.

ա) մշտապես գործող,

բ) կոնկրետ վեճը լուծելու համար ստեղծված (ad hoc):

Կախված վեճի սուբյեկտիվ կազմից, բնույթից, առարկայից կամ իրավահարաբերությունների բնույթից՝ կարող են ստեղծվել անսահմանափակ թվով միջնորդ դատարաններ:

Մշտապես գործող (ինստիտուցիոնալ) միջնորդ դատարաններ կարող են ստեղծվել առևտրարդյունաբերական պալատներին, բորսաներին, հրապարակային աճուրդներ իրականացնող կազմակերպություններին, ՀՀ բանկերի միությանը և այլ կազմակերպություններին առընթեր: Այս դատարանների գործունեության կարգը սահմանված է դրանք ստեղծող կազմակերպությունների կողմից հաստատված կանոնադրություններով, որի բովանդակությունը սահմանվում է օրենքով:

Կոնկրետ վեճը լուծելու համար միջնորդ դատարան յուրաքանչյուր դեպքում ստեղծում (ընտրում) են վեճի կողմերը:

**ՈՐԸ Է ՄԻՋՆՈՐԴ ԴԱՏԱՐԱՆԻ  
ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ**

Միջնորդ դատարանը լուծում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքին համապատասխան ՀՀ դատարանների իրավասությանը ենթակա գույքային վեճերը՝ բացառությամբ պետաիրավական, վարչաիրավական, հարկային և այլ իշխանական ենթակայության վրա հիմնված, ինչպես նաև ալիմենտա-

յին իրավահարաբերություններից ծագող վեճերի և իրավաբանական անձանց ու քաղաքացիների սնանկության գործերի:

Կողմերի միջնորդ համաձայնության առկայության դեպքում միջնորդ դատարան դիմելու իրավունք ունեն ՀՀ և օտարերկրյա քաղաքացիները և իրավաբանական անձինք, ՀՀ անհատ ձեռնարկատերերը, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձինք:

**ԻՐԱՉ Է ՄԻՋՆՈՐԴ ՀԱՄԱՉԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ  
ԵՎ ՈՐՈ՞ՆԸ ԵՆ ԴՐԱ ՏԵՍԱԿՆԵՐԸ**

Միջնորդ համաձայնությունը պայմանագրային կամ ոչ պայմանագրային բնույթի որոշակի իրավահարաբերության կապակցությամբ կողմերի միջև կնքված գրավոր համաձայնությունն է՝ առկա կամ հնարավոր բոլոր կամ որոշակի վեճերը միջնորդ դատարանի լուծմանը հանձնելու մասին:

Միջնորդ համաձայնությունը կարող է կնքվել ինչպես առանձին պայմանագրի (միջնորդ պայմանավորվածություն), այնպես էլ հիմնական պայմանագրում վերապահման (միջնորդ վերապահում) ձևով:

Միջնորդ համաձայնության մեջ պետք է նշվեն՝

- 1) միջնորդ դատարանի կազմավորման կարգը եւ դրա խախտման հետեւանքները.
- 2) միջնորդ դատավորի ինքնաբացարկի և նրան բացարկ հայտնելու կարգը.
- 3) միջնորդ դատավորի ինքնաբացարկի և նրան հայտնված բացարկի լուծման կարգը:

Միջնորդ համաձայնությունը կնքվում է գրավոր և համարվում է կնքված, եթե դա կատարվել է կողմերի ստորագրած մեկ փաստաթուղթ կազմելով կամ կնքված է նամակներով, հեռատիպով, հեռագրով կամ այդպիսի համաձայնության ամրագրումն ապահովող կապի այլ միջոցների օգտագործմամբ հաղորդումներ փոխանակելու միջոցով:

Այս իրավական պահանջները չպահպանելու դեպքում միջնորդ համաձայնությունն առոչինչ է:

**ԻՆՉՊԻՄԻՆ Է ՄԻՋՆՈՐԴ ԴԱՏԱՐԱՆԻ ԿԱԶՄԸ  
ԵՎ ԻՐԱՉ ԿԱՐԳՈՎ Է ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ  
ՄԻՋՆՈՐԴ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ**

Միջնորդ դատարանի դատավոր կարող է նշանակվել (ընտրվել) անհրաժեշտ գիտելիքներ կամ իրավահարաբերությունների համապատասխան ոլորտում աշխատանքային փորձ ունեցող անձը, ինչպես նաև,

կողմերի համաձայնությամբ ցանկացած այլ անձ՝ անկախ նրա քաղաքացիությունից:

Միջնորդ դատավորների թիվը որոշվում է կողմերի միջնորդ համաձայնությամբ, սակայն բոլոր դեպքերում այն պետք է լինի կենտ:

Եթե կողմերի միջնորդ համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ, միջնորդ դատարանն ստեղծվում է երեք դատավորի կազմով:

Միջնորդ դատարանում գործի քննությունն իրականացվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, քաղաքացիական դատավարության օրենսգրքի, «Միջնորդ դատարանների և միջնորդ դատավարության մասին» ՀՀ օրենքի, այլ օրենքների և իրավական ակտերի հիման վրա:

**ՄԻՋՆՈՐԴ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԻՐԱՌՎՈՂ  
ԻՐԱՎՈՒՆՔԻ ՆՈՐՄԵՐԸ**

Միջնորդ դատարանը վեճերը լուծում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, քաղաքացիական իրավունքի նորմեր պարունակող օրենքների և այլ իրավական ակտերի ու ՀՀ միջազգային պայմանագրերի հիման վրա:

Կողմերի միջնորդ համաձայնությամբ նախատեսված դեպքերում միջնորդ դատարանը կիրառում է այլ պետությունների իրավունքի նորմեր:

Վիճելի հարաբերությունը կարգավորող օրենքի կամ այլ իրավական ակտի բացակայության դեպքում միջնորդ դատարանը կիրառում է նույնանման հարաբերություններ կարգավորող օրենքի նորմերը (օրենքի անալոգիա), իսկ դրանց բացակայության դեպքում վեճը լուծում է՝ ելնելով իրավունքի սկզբունքներից (իրավունքի անալոգիա):

Միջնորդ դատարանը կարող է կիրառել գործարար շրջանառության սովորույթներ:

**ԻՐԱՉ ԿԱՐԳՈՎ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ ՄԻՋՆՈՐԴ  
ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՌԸ**

Միջնորդ դատարանի վճիռը կատարվում է կամավոր: Սահմանված ժամկետում և կարգով վճիռը չկատարվելու դեպքում կողմն իրավունք ունի դիմել միջնորդ դատարանի գտնվելու վայրի առաջին ատյանի կամ տնտեսական դատարան՝ միջնորդ դատարանի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ ստանալու պահանջով:

Առաջին ատյանի կամ տնտեսական դատարանն